ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 15-Լ

ԱՆՁԱՆՑ ՎԱՐՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանության մասին» օրենքի 17-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետը, անձանց վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելիս ոստիկանության ծառայողների կողմից օրենքով սահմանված պահանջները միատեսակ ընկալելու և ճիշտ կիրառելու, մարդու իրավունքների և ազատությունների հնարավոր խախտումները բացառելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել անձանց վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար

ներկայացնելիս Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ստորաբաժանումների պետերին՝ Ուղեցույցն ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների ծառայողական պարապմունքների ընթացքում:

3. Ուղեցույցի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վահե Ղազարյան

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
18.01.2024թ.

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
2024 թվականի «18 »հունվարի
թիվ 15 - Լ հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՆՁԱՆՑ ՎԱՐՈՒՅԹՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անձին հարկադրաբար ներկայացնելը՝ որպես դատավարական սանկցիայի տեսակ, նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով: Այն ենթադրում է վարույթի մասնավոր մասնակցի՝ մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, տուժողի, գույքային պատասխանողի, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցչի և լիազոր ներկայացուցչի, ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա անձին հարկադրաբար վարույթն իրականացնող մարմին ներկայացնելը՝ նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար:

2. Անձին վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը կարող է զուգորդվել վերջինիս իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

3. Անձին վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը կատարվում է միայն վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշման հիման վրա (այսուհետ՝ Որոշում):

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) ստորաբաժանումում ստացված Որոշումը Ոստիկանության ծառայողի կատարմանն է հանձնվում համապատասխան ստորաբաժանման ղեկավարի մակագրությամբ:

5. Ոստիկանության ծառայողը, Որոշումը ստանալուց անմիջապես հետո, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ պարզելու վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացվող անձի (այսուհետ՝ Անձ) բնակության (հաշվառման), ինչպես նաև աշխատանքի կամ ուսման վայրը՝ մինչև Որոշման մեջ նշված ժամկետի ավարտն այդ հասցեներ այցելություն կատարելու համար:

6. Ոստիկանության ծառայողը Որոշումն ստանալուց հետո՝ 1-օրյա ժամկետում, Անձի կոնկրետ հասցեում բնակվելու հանգամանքը պարզելու նպատակով հարցումներ է կատարում այդ հասցեում փաստացի գտնվող անձանցից, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ է ստանում հարևաններից, համատիրության ներկայացուցիչներից և այլ անձանցից:

7. Ոստիկանության ծառայողը անհրաժեշտության դեպքում ստուգում է Անձի վերաբերյալ բնակչության պետական ռեգիստրում առկա անհատական հաշվառման տվյալները, հարցումներ է կատարում Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ Անձին պատկանող անշարժ գույքի հասցեի ճշգրտման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ Անձի աշխատավայրը պարզելու համար:

8. Այն դեպքերում, երբ Որոշումն ստացվել է վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու օրվանից առնվազն 7 օր առաջ և առկա են տեղեկություններ Անձի՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու մասին, ապա ծառայողը պարտադիր կերպով սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի միջոցով իրականացնում է հարցում: Հայաստանի Հանրապետությունից բացակայելու փաստը հաստատվելու դեպքում սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի միջոցով ստացված հարցման պատասխանը Ոստիկանության ծառայողն անհապաղ ուղարկում է վարույթն իրականացնող մարմին:

9. Անձի բնակության վայրում գտնվելու հանգամանքի պարզումը պետք է իրականացվի այնպես, որ հնարավորինս բացառվի վարույթն իրականացնող մարմին Անձին հարկադրաբար ներկայացնելու համար սահմանված ժամին նշված հասցեում վերջինիս չգտնվելու կամ նշված հասցեում գտնվելուց չարամտորեն խուսափելու հնարավորությունը:

10. Անձի կոնկրետ հասցեում բնակության հանգամանքը պարզելիս անհրաժեշտ է հնարավորինս բացառել Ոստիկանության ծառայողի անմիջական հաղորդակցությունը վերջինիս հետ: Անձի բնակության վայրում գտնվելու հանգամանքի պարզումը չպետք է հանգեցնի Ոստիկանության ծառայողի կողմից վերջինիս Որոշման մասին ծանուցման:

11. Ոստիկանության ծառայողը Անձի բնակության հանգամանքը պարզելու ուղղությամբ իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ կազմում է հասցե այցելելու մասին արձանագրություն, որում պարտադիր նշվում է Անձի վերաբերյալ տեղեկություններ հայտնած անձանց անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հաշվառման հասցեն և հեռախոսահամարը: Արձանագրությունը ներկայացնում է նաև Անձի վերաբերյալ տեղեկություններ հայտնած անձանց ստորագրմանը՝ վերջիններիս համաձայնությամբ:

12. Եթե համապատասխան միջոցների ձեռնարկման արդյունքում պարզվում է Անձի գտնվելու վայրը, ապա որոշման մեջ նշված օրը՝ նշանակված ժամից առնվազն 3 ժամ առաջ, Ոստիկանության ծառայողն այցելում է այդ հասցե, սահմանված կարգով ներկայանում՝ հայտնելով պաշտոնը, կոչումը և ազգանունը, Անձին իրազեկում է որոշման մասին՝ վերջինիս ստորագրությամբ տրամադրելով նաև Որոշման պատճենը, պարզաբանում Անձին հարկադրաբար ներկայացնելու հիմքերը և պահանջում իր ուղեկցությամբ ներկայանալ վարույթն իրականացնող մարմին:

13. Եթե Անձը հրաժարվում է ծանոթանալ Որոշմանը և կատարել Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը կամ ցույց է տալիս դիմադրություն, ապա Ոստիկանության ծառայողն Անձին նախազգուշացնում է Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին, որից հետո Ոստիկանության ծառայողն Անձին վարույթն իրականացնող մարմին է ներկայացնում հարկադրաբար՝ «Ոստիկանության մասին» օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված ֆիզիկական ուժի գործադրմամբ:

14. Եթե Ոստիկանության ծառայողը միայնակ չի կարող Անձին ներկայացնել վարույթ իրականացնող մարմին, ապա անմիջապես այդ մասին տեղեկացնում է իր անմիջական ղեկավարին, ով անմիջապես միջոցներ է ձեռնարկում տվյալ հասցե օժանդակող խումբ ուղարկելու ուղղությամբ:

15. Ոստիկանության ծառայողի կողմից Անձին վարույթն իրականացնող մարմին ներկայացնելուց հետո վարույթն իրականացնող մարմնի համապատասխան աշխատակցի կողմից Որոշման դարձերեսին կատարվում է նշում:

16. Ոստիկանության ծառայողների կողմից գործադրվող միջոցները պետք է համաչափ լինեն Անձի վարքագծի բնույթին և հետևանքներին: Անձի նկատմամբ չպետք է կիրառվի բռնություն, խոշտանգում, ցուցաբերվի այլ դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

17. Եթե Ոստիկանության ծառայողը ձեռնարկված բոլոր միջոցների արդյունքում պարզում է, որ Անձը բացակայում է բնակության վայրից, ապա տեղում կազմում է արձանագրություն՝ նշելով արձանագրությունը կազմելու օրը, ամիսը, տարեթիվը, արձանագրությունը կազմելու վայրի հասցեն, իր պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը, այցելություն կատարելու նպատակը, այցելություն կատարելու ժամանակ պարզված հանգամանքները, հասցեում այլ անձանց գտնվելու պարագայում՝ նրանց անձնական տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը), Անձի հետ փոխկապակցվածության բնույթը և այլն:

18. Եթե ոստիկանության ծառայողի այցելության ժամանակ Անձի բնակության կամ հաշվառման վայրի տան (բնակարանի) դուռը գտնվում է փակ վիճակում, ապա Ոստիկանության ծառայողը հարևանների շրջանում իրականացնում է հարցումներ՝ պարզելու տվյալ Անձի կամ նրա հետ փոխկապակցվածության մեջ գտնվող անձանց հնարավոր գտնվելու կամ աշխատանքի կամ ուսման վայրերը կամ նրանց կոնտակտային տվյալները, որի վերաբերյալ կազմում է արձանագրություն:

19. Եթե Ոստիկանության ծառայողը պարզում է Անձի աշխատանքի կամ ուսման վայրերը և ստանում տեղեկություններ, որ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու օրը Անձը կարող է գտնվել այնտեղ, ապա վարույթն իրականացնելու օրը, բացի բնակության վայրից, այցելություն է կատարում նաև աշխատանքի կամ ուսման վայրեր և գործում հրամանով սահմանված կարգով:

20. Այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու համար նախատեսված ժամին անհնար է հայտնաբերել Անձին, ապա Ոստիկանության ծառայողը վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու համար նախատեսված ժամից առնվազն 1 ժամ առաջ գրությամբ այդ մասին տեղեկացնում է վարույթն իրականացնող մարմին՝ կցելով

կազմված արձանագրությունները: Գրությանը, առկայության դեպքում, կցվում են նաև Անձին հարկադրաբար ներկայացնելու անհնարինությունը հավաստող այլ փաստաթղթեր:

21. Չի թույլատրվում հարկադրաբար ներկայացնել մինչև 14 տարեկան անչափահասներին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածի դեպքերի: